ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2993-Ա « 16 » հունիսի 2026թ.

ՍԻԼԻԿՅԱՆ ԹԱՂԱՄԱՍ 4-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ.32 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք են հանդիսացել Ռոման Գևորգի Հովհաննիսյանի դիմումը՝ (որը միաժամանակ հանդիսանում է Ռուզաննա Նվերի Հովհաննիսյանի, Երվանդ Գուրգենի Հովհաննիսյանի, Արտյոմ Դերենիկի Հովհաննիսյանի լիազորված անձը) Աջափնյան վ/շ, Սիլիկյան թաղամասի 4-րդ փողոցի հ.32 հասցեում գտնվող հողամասի (1500քմ տնամերձ հողամասի, այդ թվում շենքերով ծանրաբեռնված՝ 50քմ, որից բնակելի շենքով՝ 50քմ) սահմանները ճշտելու և հատակագիծ թողարկելու մասին, ՀՀ արդարադատության նախարարության «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 31.05.2024թ. N Հ-5783 արխիվային տեղեկանքը, 16.07.2024թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի 02.03.2026թ. հ.ԱՏ-02032026-01-0253, 19.03.2026թ. հ.ԱՏ-19032026-01-0981 տեղեկանքները:

Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Սիլիկյան թաղամասի 4-րդ փողոցի հ.32 հասցեում գտնվող հողամասի /տնամերձ/ մակերեսը փաստացի չափագրությամբ կազմում է 1263.9քմ փաստաթղթերում ամրագրված 1500.0քմ մակերեսի փոխարեն, որից 117.9քմ-ն համատեղ սեփականություն՝ Սիլիկյան թաղամասի 4-րդ փողոցի հ.30 հասցեի հետ:

Քննարկվող հողամասը ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 9-րդ գոտում, ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում /հողամասի ծածկագիր՝ 01-001-0448-0010/:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.Դ-27711-26 եզրակացությունը.

1. Սահմանել, որ Սիլիկյան թաղամասի 4-րդ փողոցի հ.32 հասցեում գտնվող հողամասի /տնամերձ/ մակերեսը կազմում 1263.9քմ, որից 117.9քմ համատեղ սեփականություն՝ Սիլիկյան թաղամասի 4-րդ փողոցի հ.30 հասցեի հետ:

2. Հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ